



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

10 փետրվարի 2026 թվական

ք.Երևան

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատը,

Նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

ուսումնասիրելով թիվ ԿԴ/0906/01/25 քրեական վարույթի տարածքային ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին ուղարկելու մասին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2026 թվականի հունվարի 26-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Վարույթի դատավարական նախապատմությունը.

1. 2025 թվականի սեպտեմբերի 11-ին Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է Ալեքսանդր Արսենի Ազարյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով թիվ 69125125 (ԿԴ/0906/01/25) քրեական վարույթը:

1.1. Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր՝ Ա.Վարույան) 2025 թվականի սեպտեմբերի 12-ին որոշում է կայացրել թիվ ԿԴ/0906/01/25 քրեական վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

1.2. Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2025 թվականի հունվարի 14-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել թիվ ԿԴ/0906/01/25 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և այն Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը (դատավոր՝ Ս.Գոգոյան) 2026 թվականի հունվարի 26-ին որոշում է կայացրել թիվ ԿԴ/0906/01/25 քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

3. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2026 թվականի փետրվարի 5-ին:

Ընդդատության վերաբերյալ հարցը լուծելու համար Էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

4. Ալեքսանդր Ազարյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ «(...) նա «ՀՀ ոստիկանության պետի թիվ ***** հրամանով 2024 թվականի նոյեմբերի 1-ից զբաղեցնելով ՀՀ ՆԳՆ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության հարույն նշանակության գումարտակի ****

վաշտի **** դասակի ջոկի հրամանատարի պաշտոնը, հանդիսանալով պետական մարմնի՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության անունից հանդես գալու լիազորություն ունեցող, իրավունք, պարտականություն կամ պարասխանավորություն առաջացնող գործառույթներ իրականացնող պաշտոնատար անձ, 2025 թվականի հունիսի 16-ին բռնություն գործադրելով կատարել է այնպիսի արարք, որը չի բխել իր լիազորություններից և դուրս է այդ լիազորությունների շրջանակից, ինչի հետևանքով Մ.Մ.-ի իրավունքներին, ազատություններին և օրինական շահերին, ինչպես նաև պետության օրինական շահերին պայրճառվել է էական վնաս, որպիսի գործողություններն արտահայտվել են հետևյալում:

Այսպես.

ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՊՊԳ վարչության հարուկ նշանակության գումարտակի **** վաշտի **** դասակի ջոկի հրամանատար Ալեքսանդր Ազարյանը 2025 թվականի հունիսի 16-ին ***** ավերճանապարհին՝ ***** բնակավայրի վարչական տարածքում, իրականացվող ակցիայի ժամանակ հասարակական կարգի ապահովումն իրականացնելու նպատակով ընդգրկվել է ծառայության:

Նույն օրը՝ ժամը 10:00-ի սահմաններում, պարզաբանումներ արանալու նպատակով Ալեքսանդր Ազարյանին է մոտեցել փվյալ վայրում ակցիան լուսաբանող, ***** լրատվական կայքի լրագրող Մ. Մ. -ն և հարցեր է ուղղել ոստիկանության ծառայողների կողմից կատարվող գործողությունների վերաբերյալ: Ալեքսանդր Ազարյանը Մ.Մ.-ի կողմից փրված հարցերին հակադարձել է քղափոցով, որից հետո առանց որևէ հիմնավորման, փվյալ իրավիճակում չունենալով «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածով սահմանված բացառիկ դեպքերում ֆիզիկական ուժ գործադրելու անհրաժեշտություն, կատարել է իր լիազորություններից չբխող և դրանց շրջանակից դուրս արարք, մասնավորապես՝ կամայականորեն, առանց օրենքով հետապնդվող որևէ նպատակի ու իրավաչափ անհրաժեշտության բռնություն է գործադրել լրագրող Մ.Մ.-ի նկատմամբ, այն է՝ արմունկով մեկ անգամ հարվածել է Մ.Մ.-ի աջ կողմի շրջանին՝ պայրճառելով ֆիզիկական ցավ:

Այսպիսով, Ալեքսանդր Ազարյանի վերը նշված գործողություններով էական վնաս է պայրճառվել Մ.Մ.-ի իրավունքներին, ազատություններին, օրինական

շահերին, ինչպես նաև պետության օրինական շահերին՝ խախտվել է Կոնստանտինոպոլի ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքը, հեղինակագրվել է պետական կառավարման համակարգի մարմին հանդիսացող ՀՀ ՆԳՆ ոստիկանությունը՝ հանգեցնելով ոստիկանության խնդիրների և գործունեության սկզբունքների խախտմանը, պետական սպարապի կոնկրետ օղակի գործունեության անվանարկմանը (...)¹»:

5. Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2026 թվականի հունվարի 14-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. «(...) Թիվ ԿԴ/0906/01/25 քրեական գործի ուսումնասիրությամբ դատարանն արձանագրում է վարույթի ընդդատությունը փոխելու միջնորդության լուծման համար հետևյալ փաստական հանգամանքները.

- մեղադրական եզրակացությանը կից ներկայացված վարույթին ներգրավված բոլոր անձանց կարգավիճակի և վերաբերելի անձնական տվյալների մասին տեղեկանքում առկա տեղեկությունների համաձայն՝ վարույթի մասնավոր բոլոր մասնակիցները՝ մեղադրյալ Ա.Ազարյանը, հանրային պաշտպան Տ.Հակոբյանը, Կոնստանտինոպոլի Մ.Մ.-ն, վերջինիս լիազոր ներկայացուցիչ Ռ.Մելիքյանը և վկա Խ.Ե.-ն բնակվում են Երևան քաղաքում:

- ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարը հաշվի առնելով, որ հանրային պաշտպան Տ.Հակոբյանն այլևս չի կարող իրականացնել մեղադրյալ Ալեքսանդր Ազարյանի շահերի պաշտպանությունը գործն իր աշխատանքի կատարման վայրից դուրս քննվելու հիմքով, 22.09.2025թ. որոշում է կայացրել մեղադրյալ Ալեքսանդր Արսենի Ազարյանի քրեական գործը վերամակագրել և պաշտպան նշանակել հանրային պաշտպան Արամ Ասլանյանին:

- հանրային պաշտպան Արամ Ասլանյանի բնակության և գործունեության վայրն է հանդիսանում Կոտայքի մարզը:

Վերը նշված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշմամբ վկայակոչված իրավանորմերի համադրությամբ, դատարանն արձանագրում է թիվ ԿԴ/0906/01/25 քրեական գործով մասնավոր մասնակիցների և վկաների

¹ Տե՛ս քրեական վարույթ, հատոր 1, թերթեր 89-90:

մեծամասնությունը (ընդհանուր թվով 5 անձանցից 4-ը) բնակվում են Երևան քաղաքի առաջին արյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքում, ինչպես նաև հաշվի առնելով մեղադրյալի համաձայնությունը (միջնորդությունը) գործի տարածքային ընդդատությունը փոխելու վերաբերյալ և գործը ողջամիտ ժամկետում քննելու անհրաժեշտությունը՝ դատարանը գտնում է, որ պաշտպանության կողմի միջնորդությունը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Արդյունքում՝ դատարանը գտնում է, որ թիվ ԿԴ/0906/01/25 քրեական գործի տարածքային ընդդատությունը պետք է փոխել և այն փոխանցել Երևան քաղաքի առաջին արյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան (...)²:

6. Երևան քաղաքի առաջին արյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2026 թվականի հունվարի 26-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. «(...) Սույն գործի փաստական հանգամանքներն համադրելով վկայակոչված նորմերի հետ՝ Դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

ա. ՀՀ Կոստյուքի մարզի առաջին արյանի ընդհանուր իրավասության դատարանի 2026 թվականի հունվարի 14-ի կայացած դատական նիստում գործի տարածքային ընդդատությունը փոխելու որոշման հիմքում դրվել է այն հանգամանքը, որ վարույթի մասնավոր մասնակիցների մեծամասնությունը բնակվում է Երևան քաղաքում՝ նկատի ունենալով տուժողին, նրա լիազոր ներկայացուցչին, մեղադրյալին և վկային: Սակայն, այս առումով Դատարանը հարկ է համարում նշել, որ վկան համարվում է վարույթին օժանդակող անձ, քրեական գործով չունի մասնավոր մասնակցի կարգավիճակ: Մյուս կողմից, Դատարանն արձանագրում է, որ տարածքային ընդդատության փոփոխությունը վարույթի մասնակիցների՝ այլ վայրում բնակվելու հիմքով, չպետք է կիրառվի ինքնանպատակ, այլ միայն այն բացառիկ դեպքերում երբ դա է պահանջում արդարադատության շահը՝ գործի քննությունը ողջամիտ ժամկետներում իրականացնելու համար: Հակառակ պարագայում կառաջանա արդարադատության իրականացման խոչընդոտ:

² Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 2, թերթեր 55-59:

Գալարարանն արձանագրում է, որ այդպիսի փոփոխությունը պետք է պայմանավորված լինի նաև դալարարանների միջև որոշակի փարածքային հեռավորությամբ, որը կարող է խոչընդոտել գործի արագ քննությանը: Մինչդեռ, Երևան քաղաքի և Կոտայքի մարզի՝ մասնավորապես Գալարարանի նստավայրի՝ Չարենցավանի միջև հեռավորությունը մեծ չէ և հետևաբար վերոհիշյալ անձանց դատական նիստին ներկայանալու համար օբյեկտիվորեն չի կարող սրելով խոչընդոտ:

բ. Բացի այդ, Գալարարանը հարկ է համարում անդրադառնալ, որ գործում չկա որևէ ողջամիտ ենթադրություն կամ փաստարկ առ այն, որ գործով անցնող վկայի, տուժողի, մեղադրյալի համար Գալարարանի փարածքը կարող է խոչընդոտ հանդիսանալ կամ ազդել գործը ողջամիտ ժամկետներում քննելու համար:

Ինչ վերաբերում է տուժողի լիազոր ներկայացուցչին, ապա նա տուժողի պաշտպանությունն արանձնելուց քաջարեղյակ էր, որ գործի քննությունը պետք է իրականացվի ենթադրյալ հանցավոր արարքի կատարման փարածքում՝ Կոտայքի մարզում և դրանով հանդերձ արանձնել է նրա շահերի պաշտպանությունը:

Ամփոփելով ամբողջ վերը նշվածը՝ դալարարանը եզրահանգում է, որ ՀՀ Կոտայքի մարզի առաջին արյանի ընդհանուր իրավասության դալարարանը սույն գործը ճիշտ ընդդատությամբ արանալով և ՀՀ քրեական դատարանության օրենսգրքի 261-րդ 1-ին մասի 5-րդ կետի հիմքով քրեական վարույթը Երևան քաղաքի առաջին արյանի ընդհանուր իրավասության քրեական դալարարան ուղարկելով՝ ընդդատության որոշման կանոնի կապակցությամբ դրսևորել է ձևական մոտեցում և առանց նյութական ու դատավարական բավարար հիմքերի փոխել է գործի ընդդատությունը: Գալարարանի գնահատմամբ նման դեպքերը կարող են հանգեցնել քրեական վարույթների արհեստական ընդդատության փոփոխմանը, մինչդեռ ընդդատության կանոնը ենթադրում է կայունություն և կանխատեսելիություն:

Գալարարանը հարկ է համարում ընդգծել, որ ընդդատության կանոններն այն չափանիշներն են, որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ գործով որ դալարարանը պետք է իրականացնի արդարադատություն: Ընդդատության կանոնները կոչված են անձին զերծ պահելու դատական շրջապարույրից: Վարույթն ըստ ընդդատության

փոխանցելիս չպետք է դրսևորվի չափազանց ձևական մոտեցում, և պետք է հաշվի առնվի նաև արդարադատության շահը (...)³:

Վճարելի դատարանի քրեական պալատի հիմնավորումները և եզրահանգումը.

7. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԿԴ/0906/01/25 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և քրեական վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին որոշումը:

8. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:

9. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա սրեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:

9.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, «օրենքի հիման վրա սրեղծված դատարան» հասկացությունը մեկնաբանելիս նշել է. «Այն երկրներում, որտեղ օրենքը կողիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապարասիսան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»⁴:

Միննույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ «Ներպետական

³ Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 2, թերթեր 71-75:

⁴ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

դարական արյանները դարավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չստիպանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դարավարության արդարացիության վրա»⁵:

10. Վճռաբեկ դատարանն անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հիմնարար նշանակության վերաբերյալ իրավական դիրքորոշում է ձևավորել *Գևորգ Հարությունյանի* որոշմամբ⁶:

11. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Տարածքային ընդդարությունը բոլոր մեղադրյալների համաձայնությամբ կարող է փոխվել, եթե վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում է առաջին արյանի մեկ այլ դարարանի դարական փարածքում: Ընդդարությունը փոխելու որոշումն ընդունում է մեղադրանքը քննող դարարանը»:

Նույն օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ «(...) 4. Վարույթն ըստ փարածքային ընդդարության սրացած առաջին արյանի ընդհանուր իրավասության դարարանը մինչև նախնական դարալսումներ նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դարարանի քրեական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ վարույթի փարածքային ընդդարությանը:

(...)

7. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դարարանի քրեական պալատը վարույթը Վճռաբեկ դարարանում սրանսպու պահից հնգօրյա ժամկետում վերջնականապես լուծում է վարույթի փարածքային ընդդարության հարցը: (...)»:

11.1. Վճռաբեկ դատարանի քրեական պալատը մշտապես ընդգծել է, որ ընդդատությունը փոխելու վերոնշյալ հայեցողական լիազորությունը կարող է գործադրվել բացառիկ դեպքերում, երբ բավարար փաստական տվյալների վկայակոչմամբ համոզիչ կերպով կհիմնավորվի ընդդատությունը փոխելու օրենսդրի կողմից առաջադրվող պայմանների առկայությունը, ինչպես նաև քրեական վարույթի

⁵ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

⁶ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

տարածքային ընդդատությունը փոխելու անհրաժեշտությունը՝ արդարադատության շահի տեսանկյունից: Հետևաբար, նշված նորմը մեկնաբանելիս չպետք է դրսևորվի չափազանց ձևական մոտեցում, այն չպետք է ենթարկվի լայն մեկնաբանության:

12. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, փաստելով, որ վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքում, ինչպես նաև այն, որ առկա է մեղադրյալի համաձայնությունը վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու վերաբերյալ, գտել է, որ քրեական վարույթի ողջամիտ ժամկետում քննության ապահովման տեսանկյունից քրեական վարույթի հետագա քննությունը պետք է իրականացվի Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում⁷:

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, փաստելով, որ վարույթի տարածքային ընդդատության փոփոխությունը վարույթի մասնակիցների մեծամասնության՝ այլ վայրում բնակվելու հիմքով, պետք է կիրառվի միայն այն ժամանակ, երբ, ելնելով ողջամիտ ժամկետում գործի քննության ապահովման անհրաժեշտությունից, դա է պահանջում արդարադատության շահը, ինչպես նաև այն, որ Երևան քաղաքի և Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Չարենցավանի ստավայրի միջև հեռավորությունը մեծ չէ և գործում առկա չէ ողջամիտ ենթադրություն կամ փաստարկ առ այն, որ վարույթի մասնակիցների համար դատարանի տարածքը կարող է խոչընդոտ հանդիսանալ կամ ազդել գործի քննությունը ողջամիտ ժամկետում իրականացնելու պահանջի ապահովման վրա, գտել է, որ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը սույն վարույթը ճիշտ ընդդատությամբ ստանալով և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված հիմքով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան ուղարկելով, դրսևորել է ձևական մոտեցում⁸:

⁷ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

⁸ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

13. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշմամբ վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը փաստում է, որ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելիս և վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելիս, չի պահպանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը կրկնում է, որ **քրեական վարույթի տարածքային ընդդատությունը կարող է փոխվել միայն բացառիկ դեպքերում, երբ բավարար փաստական տվյալների վկայակոչմամբ համոզիչ կերպով կհիմնավորվի ինչպես ընդդատությունը փոխելու համար առաջադրվող պայմանների առկայությունը, այնպես էլ քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու անհրաժեշտությունը՝ արդարադատության շահի տեսանկյունից:**

Մինչդեռ, սույն դեպքում Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը որևէ հիմնավորում չի ներկայացրել, թե քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելը որքանով է անհրաժեշտ արդարադատության շահի տեսանկյունից: Վճռաբեկ դատարանի քրեական պալատը, հաշվի առնելով սույն վարույթի մասնավոր մասնակիցների և վկայի կողմից Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ներկայանալուն խոչընդոտող հանգամանքների վերաբերյալ փաստարկների բացակայությունը, սույն վարույթի ծավալը, ինչպես նաև այն, որ սույն վարույթով քննությունն իրականացվում է Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Չարենցավանի նստավայրում, ընդունելի է համարում Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի այն դատողությունը, որ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը վարույթի տարածքային ընդդատությունը փոխել և վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան է փոխանցել՝ վերոնշյալ բացառիկ հիմքերի բացակայության պայմաններում՝ **դրսևորելով չափազանց ձևական մոտեցում:**

14. Ամփոփելով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատն արձանագրում է, որ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԿԴ/0906/01/25 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և քրեական վարույթն Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին որոշումը հիմնավոր չէ:

15. Վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ սույն քրեական վարույթն ըստ ընդդատության պետք է ուղարկել Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ ԿԴ/0906/01/25 քրեական վարույթն ըստ ընդդատության ուղարկել Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

Նախագահող՝ _____ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ _____ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

_____ Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

_____ Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆ

_____ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

_____ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ